Ա Զ Դ Ա Գ Ի Ր

ՀՀ ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ 26.11.2018թ. ԹԻՎ 1/808Ա ՈՐՈՇՄԱՄԲ ԳՐԱՆՑՎԱԾ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԼՐԱՑՈՒՄ

«Յուքոմ» ՍՊԸ

Թողարկողի ֆիրմային անվանումը

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան 0015, Գր. Լուսավորիչ 9
Հեռ՝ (+37411) 400 400, Ֆաքս՝ (+37411) 400 401
Էլ.-փոստ՝ info@ucom.am
Կայք՝ www.ucom.am

«ԱՐՄԵՆԲՐՈԿ» ԲԲԸ

Գլխավոր տեղաբաշխողի անվանումը

բաց բաժնետիրական ընկերություն

Կազմակերպա-իրավական ձևը

ՀՀ, ք. Երևան, 0018, Տիգրան Մեծի 32/1, տ. 8
Հեռ՝ (+374 10) 53 87 00
Էլ.-փոստ՝ armenbrok@armenbrok.com
Կայք՝ www.armenbrok.am

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ԳՐԱՆՑՈՒՄԸ ՉԻ ՀԱՎԱՍՏՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆԸ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՃՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ԻՍԿՈՒԹՅՈՒՆԸ:

Արժեթղթերի տեսակը՝	անվանական, արժեկտրոնային պարտատոմս
Արժեթղթերի ձևը՝	ոչ փաստաթղթային
Արժեթղթերի քանակը՝	համապատասխան Թողարկման ծավալի ու անվանական արժեքի
Արժեթղթերի անվանական արժեքը՝	100 (մեկ հարյուր) ԱՄՆ դոլար, 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ
Արժեթղթերի թողարկման ծավալը՝	**Դոլարային պարտատոմսերի դեպքում՝** առավելագույնը 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, **Դրամային պարտատոմսերի դեպքում՝** առավելագույնը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և նվազագույնը մինչև թողարկման պահը Թողարկողի կողմից նախկինում թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը) տոկոսը
Արժեկտրոնը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ
Շրջանառության ժամկետը՝	ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ 3

ՄԱՍ 1 ԱՄՓՈՓԱԹԵՐԹ 5

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ 5

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը 8

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները 10

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ 11

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը 11

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները 12

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը 13

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը 13

1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ 13

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ 17

3.1 Անկախ աուդիտորներ 17

3.2 Ռիսկային գործոններ 17

3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին 18

3.4 Բիզնեսի նկարագիրը 20

3.5 Թողարկողի հիմնական միջոցները 22

3.6 Զարգացման վերջին միտումները 23

3.7 Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները 23

3.9 Հսկող անձինք 25

3.11 Լրացուցիչ տեղեկատվություն 26

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ

«Մենք՝ ստորագրող անձինք, հավաստիացնում ենք, որ գործադրել ենք բոլոր ողջամիտ ջանքերը, որպեսզի պարզենք ազդագրում ներառված տեղեկությունների ճշգրիտ և լիարժեք լինելը: Ըստ այդմ, մենք հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ազդագրում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք են, չեն պարունակում բացթողումներ, որոնք կարող են խեղաթյուրել ազդագրի բովանդակությունը»:

Ստորագրող անձինք՝

Հայկ Հովիկի Եսայան	Ընդհանուր ժողովի մասնակից		04.07.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Ալեքսանդր Հովիկի Եսայան	Ընդհանուր ժողովի մասնակից		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արամ Սուրենի Խաչատրյան	Ընդհանուր ժողովի մասնակից		04.07.2019.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	Ընդհանուր ժողովի մասնակից		04.07.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	Ընդհանուր ժողովի մասնակից		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ՝ ի դեմս Արթուր Մաթևոսյանի	Ընդհանուր ժողովի մասնակից		04.07.19
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ»՝ ի դեմս Սերգեյ Բալակինի	Ընդհանուր ժողովի մասնակից		
		(ստորագրություն)	(ամսաթիվ)
Սուրիկ Սիրակի Պողոսյան	Ընդհանուր ժողովի մասնակից		
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Կարեն Մնացականյան	Ֆինանսական տնօրեն		04.07.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)
Տաթևիկ Գևորգյան	Գլխավոր հաշվապահ		04.07.2019
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Ստորագրությունները հավաստում եմ՝

Հայկ Հովիկի Եսայան	Գլխավոր տնօրեն		04.07.2019.
(անուն, ազգանուն)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

Տեղաբաշխող

ԱՐՄԵՆԲՐՈԿ ԲԲԸ ի դեմս Արամ Կայֆաջյանի	Գլխավոր տնօրեն		07.2019
(անվանում)	(պաշտոն)	(ստորագրություն)	(ամսաթիվ)

Կ.Տ.

ՄԱՍ 1ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂԻՆ

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԸ ՊԵՏՔ Է ԴԻՏՎԻ ՈՐՊԵՍ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ:
ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԱՐԺԵԹՂԹԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԱՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԴՐՈՂԻ ՈՐՈՇՈՒՄԸ ՊԵՏՔ Է ՀԻՄՆՎԱԾ ԼԻՆԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՎՐԱ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԻՆՔ ԱՄՓՈՓԱԹԵՐԹՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ) ԿՐՈՒՄ ԵՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ԵԹԵ ԱՅՆ ՈՉ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԿԱՄ ԱՊԱԿՈՂՄՆՈՐՈՇԻՉ Է ԾՐԱԳՐԱՅԻՆ ԱԶԴԱԳՐԻ ՄՅՈՒՍ ՄԱՍԵՐԻ ՀԵՏ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ:

Ներդրողը կարող է ձեռք բերել Ծրագրային Ազդագիրը և վերջինիս կից ներկայացվող փաստաթղթերը էլեկտրոնային տարբերակով www.ucom.am և www.armenbrok.am կայքերից:

1.1 Տեղեկատվություն թողարկողի և նրա գործունեության վերաբերյալ

1.1.1 Թողարկողի տվյալները և կապի միջոցները

Թողարկողի լրիվ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Ռուսերեն՝ Общество с ограниченной ответственностью “ЮКОМ”
Անգլերեն՝ “UCOM” Limited Liability Company

Թողարկողի կրճատ ֆիրմային անվանումն է

Հայերեն՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ
Ռուսերեն՝ ООО “ЮКОМ”
Անգլերեն՝ “UCOM” LLC

Թողարկողի պետական գրանցման վայրն է՝ 0010, ՀՀ, ք. Երևան, Տերյան 19շ, բն.4
Թողարկողի պետական գրանցման համարն է՝ 264.110.02498
Թողարկողի գործունեության վայրն է ՀՀ, ք. Երևան 0015, Գր. Լուսավորիչ 9
Կապի միջոցները՝ Հեռ.՝ (+37411) 400400
Ֆաքս՝ (+37411) 400401
էլ. Փոստ՝ info@ucom.am
կայք՝ www.ucom.am

Թողարկողին առնչվող հարցերի առաջացման դեպքում կարելի է դիմել «Յուքոմ» ՍՊԸ Գանձապետարանի աշխատակից Արմինե Գաբրիելյանին կապի հետևյալ միջոցներով. հեռ.՝ +37411 400 400, էլ. հասցե՝ armine.gabrielyan@ucom.am:

1.1.2 Թողարկողի համառոտ պատմությունը և ռազմավարությունը

«ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Թողարկող կամ Ընկերություն) էլեկտրոնային հաղորդակցության ոլորտում իր հիմնական գործունեությունը սկսել է 2009թ.-ից՝ որպես հեռուստատեսության (IPTV), ինտերնետ կապի և թվային հեռախոսակապի ծառայություն մատուցող ընկերություն:

Ընկերությունը **2009թ**.-ին ներդրեց «օպտիկա դեպի տուն» լուծումը, որն ապահովում էր IP հեռուստատեսություն (IPTV), գերարագ ինտերնետ կապ և թվային հեռախոսակապ:

Ընկերությունը **2010թ**.-ին դարձավ ամենախոշոր մեծածախ օպերատորը Հայաստանում՝ շնորհիվ Հայաստանը Վրաստանի հետ կապող սեփական օպտիկամանրաթելային կապուղու: **2011թ**.-ին Ընկերությունն սկսեց տարանցիկ ինտերնետ մատակարարել Մերձավոր Արևելք:

2011թ.-ին Ընկերությունը ձեռք է բերում «ԱՅՔԱՆ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆՍ» ՓԲ ընկերության 100% բաժնետոմսերը, որն ապահովում էր լայնաշերտ ինտերնետ կապ Երեւանում, օգտագործելով WiMAX տեխնոլոգիան եւ Alcatel-Lucent բազային կայանները:

2012թ.-ին Ընկերությունը ձեռք է բերում «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասերը, որն ապահովում էր թվային հեռուստատեսության ծառայություններ Երեւանում:

2013թ.-ին Ընկերությունը ստացավ հանրային շարժական ինտերնետ կապի ծառայություններ մատուցելու լիցենզիա, իսկ **2015թ**.-ին ձեռք բերեց «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերության 100% բաժնետոմսերը՝ այսպիսով մուտք գործելով նաև ՀՀ շարժական կապի շուկա: Ընկերությունը **2016թ**.-ին ՀՀ ամբողջ տարածքում գործածեց միջազգային չափանիշներին համապատասխանող 4G+ ցանցը:

2017թ. Speedtest by Ookla ընկերությունը Թողարկողին շնորհել է «Հայաստանում ամենաարագ շարժական ցանց 2017» մրցանակը:

2018թ. Ընկերությունը ընդլայնել է 4G+ ցանցը՝ ապահովելով 98,05% ծածկույթ:

Ընկերությունը շարունակաբար ամրապնդում է իր դիրքը գործունեության հիմնական շուկաներում և միևնույն ժամանակ ստեղծում եկամտի ստացման նոր հնարավորություններ՝ նորարար և տարբերակված թվային լուծումներ մշակելու միջոցով:

Գործելով խիստ մրցակցային և արագ զարգացող շուկայում, որտեղ ավանդական ձայնային և կարճ հաղորդագրությունների ծառայությունները կտրուկ անկում են ապրում, Ընկերությունը վերանայել է իր բիզնես առաջնություններն ու մոտեցումները, որոնք ուղղված են հստակ թիրախային խմբերի պահանջմունքների բավարարմանը:

1.1.3 Թողարկողի կանոնադրական կապիտալը և դրա կառուցվածքը

Թողարկողի կանոնադրական կապիտալն առ 30.06.2019թ. կազմել է 23,903,477 (քսաներեք միլիոն ինը հարյուր երեք հազար չորս հարյուր յոթանասունյոթ) ՀՀ դրամ, որը բաժանված է թվով 8 (ութ) բաժնեմասերի: Թողարկողի մասնակիցների ցանկը (ներառյալ բաժնեմասնակցության չափերը) ներկայացված է սույն Ծրագրային Ազդագրի 1.5 կետով:

1.1.4 Թողարկողի բիզնեսի նկարագիրը

Թողարկողը ՀՀ-ում ֆիքսված և շարժական կապի ծառայություններ մատուցող ընկերություն է: 2019թ.-ի 1-ին եռամսյակի եկամտի ցուցանիշով ընդհանուր ֆիքսված ինտերնետի շուկայում Ընկերությունը զբաղեցրել է առաջատար դիրք (շուկայի 50.4%): Ընկերությունը նաև առաջատար դիրք է զբաղեցնում շարժական ինտերնետի (բացառությամբ բջջային հեռախոսի միջոցով օգտվողների) շուկայում՝ շուկայի եկամտի 64.4% ցուցանիշով:

Միջազգային լավագույն չափանիշներին համապատասխանող արդիականացված 4G+ և սեփական օպտիկամանրաթելային ցանցերի օգնությամբ Ընկերությունը տրամադրում է ֆիքսված և շարժական կապի ծառայությունների ամբողջական փաթեթ ավելի քան 600 հազար բաժանորդների:

Ընկերությունը պարբերաբար հանդես է գալիս նորարարական առաջարկներով.

- շարժական հեռուստատեսություն իր MediaRoom հավելվածով,
- 1 SIM-քարտում հայկական և ռուսական համար ունենալու հնարավորություն,
- U!Cloud ամպային լուծումները և այլն:

Ընկերության սպասարկման սրահները գործում են ՀՀ բոլոր մարզերում:

1.1.5 Թողարկողի կազմակերպական կառուցվածքը

Ընկերության կազմակերպական կառուցվածքը ներկայացված է Հավելված 4-ում:

1.1.6 Ակտիվները

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Թողարկողի ընդհանուր ակտիվների մեծությունը, համաձայն աուդիտ անցած հաշվետվությունների, կազմել է 115.9 մլրդ ՀՀ դրամ: Նույն պահի դրությամբ Լևերեջի գործակիցը (ընդհանուր կապիտալի հարաբերությունն ընդհանուր ակտիվներին) կազմել է 14.3%:

1.2 Թողարկողին և պարտատոմսերին առնչվող ռիսկերը

1.2.1 Թողարկողին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Աճող մրցակցություն: Թողարկողն իր գործունեությունն իրականացնում է բարձր մրցակցային շուկաներում, որտեղ տեխնոլոգիական նորարարությունները և գնային «պատերազմները» կարող են ազդել Թողարկողի ապագա եկամուտների և շահութաբերության վրա:

Բավարար դրամական հոսքեր: Շուկայական բարձր մրցակցության և տեխնոլոգիաների դինամիկ զարգացման պայմաններում Թողարկողը կարող է չապահովել բավականաչափ դրամական հոսքեր Թողարկողի կողմից ապագայում կատարվելիք կապիտալ և գործառնական ծախսերը ֆինանսավորելու համար:

Տեխնոլոգիական փոփոխություններ: Թողարկողը ենթակա է տեխնոլոգիական փոփոխություններին առնչվող ռիսկերի, որոնք առաջ են գալիս հեռահաղորդակցման ցանցերի զարգացման, ընդլայնման և պահպանման գործընթացներում:

Նորմատիվ և օրենսդրական դաշտի փոփոխություն: Թողարկողն իր գործունեությունը ծավալում է կարգավորվող շուկաներում, ինչը կարող է ենթադրել ապագայում լրացուցիչ ծախսերի կրում կամ եկամուտ բերող գործունեության ուղղությունների սահմանափակում, որոնք կարող են ազդել Թողարկողի շուկայական մասնաբաժնի, մրցակցային դիրքի, ապագայում ստեղծվող շահույթի և դրամական հոսքերի վրա:

Մատակարարի կամ երրորդ կողմի ռիսկ: Թողարկողի գործունեությունն էապես կախված է սարքավորումների և ծառայությունների մատակարարներից, որոնք հնարավոր է, որ չկարողանան ժամանակին մատակարարել սարքավորումները և ծառայությունները, կամ դադարեցնեն մատակարարումը, կամ սահմանեն գներ, որոնք ոչ մրցակցային են:

Հաճախորդների արտահոսք: Թողարկողի գործարար պլանի իրագործումը մեծապես կախված է Թողարկողի կողմից հաճախորդների արտահոսքը կառավարելու կարողությունից: Եթե Թողարկողը չհաջողի ինչպես հարկն է վերահսկել հաճախորդների հոսքը, ապա այն կարող է բացասաբար ազդել Թողարկողի ֆինանսական ցուցանիշների վրա:

Ցանցային ընդհատումների ռիսկ: Անսպասելի ցանցային ընդհատումները, որոնք գտնվում են Թողարկողի վերահսկողությունից դուրս, կարող են խոչընդոտել Թողարկողի կողմից ծառայությունների պատշաճ մատուցմանը: Այդպիսի ընդհատումները կարող են առաջացնել մեծ ծախսեր՝ կապված նորոգման աշխատանքների հետ, ինչպես նաև ազդել հաճախորդների գոհունակության վրա՝ այդպիսով կրճատելով Թողարկողի հաճախորդների բազան, եկամուտները և վնասելով Թողարկողի համբավը:

Աշխարհաքաղաքական ռիսկեր: Աշխարհաքաղաքական, տարածաշրջանային և ներքաղաքական իրավիճակի անբարենպաստ փոփոխությունների արդյունքում հնարավոր է առաջ գան այնպիսի բացասական գործոններ, որոնք կարող են անբարենպաստ ազդեցություն

ունենալ ընդհանուր մակրոտնտեսական իրավիճակի վրա, ինչն էլ կարող է հանգեցնել Թողարկողի գործունեության, հեռանկարի և ֆինանսական կատարողականի վատթարացմանը:

Փոխառու կապիտալի բարձր մակարդակ: Ընկերության ակտիվների մեծ մասը ֆինանսավորված են վարկերի և փոխառությունների հաշվին, որի արդյունքում Ընկերությունն ունի ֆինանսական լևերիջի՝ ոլորտային միջին ցուցանիշից ավելի բարձր մակարդակ: Ընկերության ակտիվների՝ փոխառու կապիտալով ֆինանսավորման բարձր մակարդակը կարող է բացասաբար անդրադառնալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Արտարժութային ռիսկ: Թողարկողն ունի արտարժույթով ներգրավված վարկեր և փոխառություններ, որոնց հաշվեկշռային արժեքը, պայմանավորված արտարժութային շուկայում փոխարժեքի տատանմանբ, կարող է ենթարկվել փոփոխությունների, ինչն էլ կարող է բացասաբար ազդել Թողարկողի վարկունակության վրա:

1.2.2 Պարտատոմսերին առնչվող ռիսկերի համառոտ նկարագիրը

Տոկոսադրույքի ռիսկ: Տնտեսությունում տոկոսադրույքների փոփոխությունը կարող է հանգեցնել ներդրողների կողմից Թողարկողի պարտատոմսերի նկատմամբ եկամտաբերության ցուցանիշի վերանայման, ընդ որում ընդունված է համարել, որ այլ հավասար պայմաններում պարտատոմսերի երկրորդային շուկայում պարտատոմսերի գները գտնվում են հակադարձ կախվածության մեջ տոկոսադրույքների մակարդակից, այսինքն տոկոսադրույքների բարձրացումը այլ հավասար պայմաններում հանգեցնում է պարտատոմսերի գնի անկմանը և հակառակը:

Շուկայական ռիսկ: Երկրորդային շուկայում Թողարկողի պարտատոմսերի գինը և դրանց նկատմամբ պահանջարկը կարող են նվազել ներքին/միջազգային տնտեսություններում տնտեսական ընթացիկ ցուցանիշների և դրանց փոփոխությունների սպասումների հետ կապված: Ներդրողը պետք է հաշվի առնի, որ արժեթղթերի գները շուկայում կարող են ժամանակի ընթացքում իջնել կամ բարձրանալ:

Վերաներդրման ռիսկ: Այն բոլոր ներդրողներն, ովքեր Թողարկողի պարտատոմսերը ձեռք կբերեն դրանք մինչև մարումը պահելու և ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությունն ապահովելու ու ստանալու համար, պետք է նկատի ունենան, որ իրենց վրա են վերցնում վերաներդրման ռիսկ, որը պայմանավորված է Թողարկողի պարտատոմսերից պարբերաբար ստացվող արժեկտրոնային եկամուտների առնվազն համարժեք եկամտաբերությամբ (ձեռքբերման գործարքով սահմանված մինչև մարումը եկամտաբերությամբ) ներդրում կատարելու հնարավարության բացակայությամբ:

Վարկային/դեֆոլտի ռիսկ: Ներդրողները Թողարկողի պարտատոմսեր ձեռք բերելիս իրենց վրա են վերցնում Թողարկողի վարկային ռիսկը (ապահովված պարտատոմսերի դեպքում այդ ռիսկը համեմատաբար ավելի ցածր է), որը կապված է ապագայում Թողարկողի ֆինանսական վիճակի հնարավոր վատթարացման, արժեկտրոնային վճարումներ

իրականացնելու կամ պարտատոմսերն իրենց անվանական արժեքով մարման անհնարինության և հավանական սնանկացման հետ:

Արտարժութային ռիսկ: Թողարկվող դոլարային պարտատոմսերն արտահայտված են ԱՄՆ դոլարով, իսկ դրամայինները՝ ՀՀ դրամով, և հետևապես, նեդրումները և ներդրումների ետ ստացումը (պարտատոմսերի ձեռք բերման/մարման դիմաց ստացվող գումարներ) իրականացվելու են համապատասխանաբար ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով: Ուստի, այս իմաստով արտարժութային ռիսկն առկա է այն ներդրողների մոտ, ովքեր, իրենց դրամական միջոցները սույն պարտատոմսերում ներդնելու նպատակով, պետք է իրենց ֆինանսական միջոցները փոխարկեն այլ արժույթներից ԱՄՆ դոլարի կամ ՀՀ դրամի:

Իրացվելիության ռիսկ: Թողարկողը չի կարող երաշխավորել, որ պարտատոմսերի շրջանառության ողջ ժամկետի ընթացքում ներդրողները ցանկացած պահի կարող են իրացնել կամ ձեռք բերել պարտատոմսերը երկրորդային շուկայում (կարգավորվող շուկայում) իրենց համար տնտեսապես շահավետ գնով:

Գնաճի կամ գնողունակության ռիսկ: ՀՀ-ում գնաճի առկայության պարագայում, Թողարկողի կողմից իր պարտատոմսերի դիմաց առաջարկվող անվանական արժեկտրոնային եկամտաբերությունը գնահատելիս ներդրողները պետք է հաշվի առնեն, որ իրական եկամտաբերությունը կարող է լինել անվանական արժեկտրոնային եկամտաբերությունից ավելի ցածր (գնաճի չափով):

1.3 Թողարկողի տնտեսական գործունեության զարգացման և ֆինանսական վիճակի փոփոխության միտումները

Ընկերության կողմից բնականոն գործունեություն իրականացնելու համար առկա են հետևյալ հիմնական լիցենզիաները՝

ՀՀ տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի (ցանցի շահագործման) համար լիցենզիա	1	Թիվ 0479, տրված 19/11/2008թ.-ին ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (ՀԾԿՀ) կողմից №635Ա որոշմամբ, վավեր է մինչև 19/11/2023թ.
Հեռուստառադիոծրագրերի կաբելային (մալուխային) հեռարձակման լիցենզիա	2	Թիվ 186, տրված 15/10/2012թ.-ին ՀՀ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից, վավեր է մինչև 16/10/2022թ.

Ընկերության գործունեության համար առկա լիցենզիաների դիմաց յուրաքանչյուր եռամսյակ վճարվող պետական տուրքի գումարը կազմում է 525 միլիոն ՀՀ դրամ:

Թողարկողի գործունեությունը գտվում է Ընկերության մասնակիցների և գործադիր մարմնի ուշադրության ներքո, որոնք մշտապես հետևում են շուկայական իրավիճակի փոփոխություններին՝ համապատասխանեցնելով Ընկերության գործունեությունը և զարգացման ծրագիրը շուկայի և նորագույն տեխնոլոգիաների պահանջներին:

Ընկերությունը գտնվում է խոշոր ներդրումային փուլում և գրեթե բոլոր ֆինանսական ցուցանիշներով 2018թ-ին համապատասխանել է պլանավորված բիզնես ծրագրին, նույնիսկ արձանագրել պլանավորվածից բարձր եկամտաբերություն: Ընկերությունը չունի այլ էական պարտավորվածություններ ապագայում իրականացվելիք ներդրումների գծով, որոնք սահմանված են մատակարարների հետ կնքված պայմանագրերով և արտացոլված չեն Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերությունը 2017-2019թթ-ին ընդլայնում է նաև արտերկրյա տարածքում ինտերնետի մեծածախ վաճառքը:

1.4 Թողարկողի աուդիտն իրականացնող անձի և խորհրդատուների ինքնության մասին տեղեկություններ

Թողարկողի 2016 - 2018 թթ. ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացրել է «ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ-ը՝

ՀՀ, ք. Երևան 0010,
Վազգեն Սարգսյանի փ., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ.՝ + 374 (10) 56 67 62
Ֆաքս՝ + 374 (10) 56 67 62
Կայք՝ http://www.kpmg.am

1.5 Թողարկողի կառավարման մարմնի անդամները, աշխատակիցները և խոշոր բաժնետերերը

Թողարկողի կառավարման մարմիններն են Ընկերության մասնակիցների (կամ նրանց լիազոր ներկայացուցիչների) ընդհանուր ժողովը և գործադիր մարմինը՝ Գլխավոր տնօրենը:

Ընկերության գործադիր մարմնի կազմը ներկայացված է ստորև.

Անունը, ազգանունը	Պաշտոն	Փորձառությունը
Հայկ Հովիկի Եսայան	Գլխավոր տնօրեն	Թողարկողի տնօրենն է 16.03.2009թ.-ից

Թողարկողի աշխատակիցների ընդհանուր թիվը կազմում է 1707 առ 30.06.2019 թ.:

Թողարկողի մասնակիցներն են՝

Մասնակիցը	Բաժնեմասը (ՀՀ դրամ)	Բաժնեմասի չափը (%)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	6,954,246	29.093

Արամ Սուրենի Խաչատրյան	5,818,721	24.343
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	2,846,649	11.909
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	2,846,649	11.909
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (բաժնետիրական ընկերություն)	2,510,696	10.504
Հայկ Հովիկի Եսայան	709,983	2.970
Ալեքսանդր Հովիկի Եսայան	709,983	2.970
Սուրիկ Սիրակի Պողոսյան	1,506,520	6.302

Թողարկողի 29.093 տոկոս բաժնեմաս ունեցող «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ-ի 100 տոկոս բաժնեմասը պատկանում է «ԴԱՐԻՍՈՆ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՍՊԸ –ին, որի 50 տոկոս բաժնեմասը պատկանում է Գուրգեն Գագիկի Խաչատրյանին, իսկ մյուս 50-ը Արտյոմ Գագիկի Խաչատրյանին:

1.6 Առաջարկվող արժեթղթերի հիմնական վիճակագրական տվյալները

Թողարկվող պարտատոմսերն անվանական են և ոչ փաստաթղթային, անբաժանելի են և փոխարկելի չեն:

Թողարկվող պարտատոմսերի դիմաց տոկոսային վճարումները կատարվելու են արժեկտրոնների միջոցով:

ԱՄՆ դոլարով թողարկվող պարտատոմսերը տեղաբաշխվում, շրջանառվում և մարվում են ԱՄՆ դոլարով, իսկ ՀՀ դրամով թողարկվող պարտատոմսերը՝ ՀՀ դրամով: Պարտատոմսերի սեփականատերերին արժեկտրոնային վճարումները կատարվում են ՀՀ դրամով: ԱՄՆ դոլարով թողարկված պարտատոմսերի դիմաց արժեկտրոնների վճարման համար հիմք է ընդունվում արժեկտրոնների հաշվարկման օրվան նախորդող աշխատանքային օրվա համար ՀՀ ԿԲ կողմից ԱՄՆ դոլարի նկատմամբ հրապարակված միջին փոխարժեքը:

Դոլարային պարտատոմսերի թողարկման դեպքում թողարկման (առաջարկի) ընդհանուր ծավալը կազմում է առավելագույնը 10,000,000 (տասը միլիոն) ԱՄՆ դոլար, իսկ դրամային պարտատոմսերի դեպքում՝ առավելագույնը 500,000,000 (հինգ հարյուր միլիոն) ՀՀ դրամ և նվազագույնը մինչև թողարկման պահը Թողարկողի կողմից թողարկված և շրջանառության մեջ գտնվող դոլարային պարտատոմսերի ընդհանուր անվանական ծավալի 10% (տասը տոկոսը):

Տեղաբաշխվող (վաճառվող) պարտատոմսերի քանակը որոշվելու է Թողարկման ծավալին ու անվանական արժեքին համապատասխան:

Մեկ դոլարային պարտատոմսի անվանական արժեքը կազմում է 100 ԱՄՆ դոլար, իսկ մեկ դրամային պարտատոմսինը՝ 100,000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամ:

Պարտատոմսերի մարման օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի դիմաց նախատեսվող արժեկտրոնային եկամուտների վճարման պարբերականությունը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Թողարկման արդյունքում ներգրավված միջոցները Թողարկողն ուղղելու է Ընկերության պարտավորությունների վերաֆինանսավորմանը և կապիտալ ներդրումների իրականացմանը:

1.7 Արժեթղթերի առաջարկի համակողմանի նկարագիրը

Պարտատոմսերի տեղաբաշխումն սկսելու և ավարտելու օրը ենթակա է որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Պարտատոմսերի ձեռքբերման գործընթացի մանրամասները և վաճառքի պայմանները ենթակա են հաստատման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

1.8 Վերջնական պայմանների հրապարակման ձևը

Պարտատոմսերի թողարկման, տեղաբաշխման, շրջանառության ու մարման վերջնական պայմանները ենթակա են որոշման Թողարկողի կողմից պարտատոմսերի տեղաբաշխման սկիզբը որոշող ամսաթվից առնվազն 5 (հինգ) աշխատանքային օր առաջ:

Արժեթղթերի յուրաքանչյուր թողարկման վերջնական պայմանները Թողարկողը պարտավորվում է հրապարակել առնվազն իր ինտերնետային կայքում:

1.9 Ամփոփ ֆինանսական տվյալներ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից հասույթ	40,717,327	37,146,209	34,999,236
Իրացված արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ինքնարժեք	(28,046,210)	(24,152,061)	(23,538,508)
Համախառն շահույթ (վնաս)	**12,671,117**	**12,994,148**	**11,460,728**
Իրացման ծախսեր	(7,945,752)	(7,957,775)	(8,148,097)
Վարչական ծախսեր	(3,086,002)	(2,791,054)	(2,801,783)
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից շահույթ (վնաս)	**1,639,363**	**2,245,319**	**510,847**
Գործառնական այլ եկամուտներ	630,727	1,638,273	1,374,180
Գործառնական այլ ծախսեր	(486,595)	(2,165,327)	(2,046,739)
Գործառնական շահույթ (վնաս)	**1,783,494**	**1,718,265**	**(161,712)**
Ֆինանսական ծախսեր	**(6,800,621)**	**(6,426,047)**	**(6,964,912)**
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումների գծով շահույթ (վնաս)	-	-	-
Ընդհատվող գործառնությանը վերագրելի ակտիվների վաճառքներից և պարտավորությունների մարումներից շահույթ (վնաս)	-	-	-
Այլ ոչ գործառնական շահույթ (վնաս)	(49,509)	(274,698)	82,322
Սովորական գործունեությունից շահույթ (վնաս)	**(4,967,618)**	**(4,982,480)**	**(7,044,303)**
Արտասովոր դեպքերից շահույթ (վնաս)	-	-	-
Զուտ շահույթ (վնաս) նախքան շահութահարկի գծով ծախսի նվազեցումը	**(4,967,618)**	**(4,982,480)**	**(7,044,303)**
Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում)	(276,833)	1,020,171	2,457,690
Զուտ շահույթ (վնաս) շահութահարկի գծով ծախսի նվազեցումից հետո	**(5,244,451)**	**(3,962,309)**	**(4,586,612)**

ԱՄՓՈՓ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԵԿՇԻՌ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Հիմնական միջոցներ	47,888,184	46,431,089	43,579,294
Անավարտ ոչ ընթացիկ նյութական ակտիվներ		-	-
Ոչ նյութական ակտիվներ	36,908,283	41,044,039	42,989,649
Բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ներդրումներ		-	-
Այլ ոչ ընթացիկ ֆինանսական ակտիվներ	5,550	14,520	21,680
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	5,879,105	5,421,179	3,583,163
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ	**90,681,122**	**92,910,827**	**90,173,787**
Պաշարներ	881,638	1,169,078	948,036
Տրված ընթացիկ կանխավճարներ	1,203,277	1,312,508	982,365
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	11,638,046	12,495,653	7,183,104
Այլ դեբիտորական պարտքեր	-	-	-
Ընթացիկ ֆինանսական ներդրումներ	3,427	1,927	1,888
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	10,170,245	4,903,741	4,438,934
Այլ ընթացիկ ակտիվներ	1,370,497	878,006	2,965,224
Ընդամենը ընթացիկ ակտիվներ	**25,267,130**	**20,760,913**	**16,519,550**
Ընդամենը ակտիվներ	**115,948,252**	**113,671,740**	**106,693,337**
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի զուտ գումար	22,397	22,397	16,959
Էմիսիոն եկամուտ	-	-	-
Կուտակված շահույթ	(19,466,807)	(12,991,784)	(9,029,475)
Պահուստային կապիտալ	-	-	-
Սեփական կապիտալի այլ տարրեր	36,024,365	33,531,696	17,226,885
Ընդամենը սեփական կապիտալ	**16,579,955**	**20,562,309**	**8,214,369**
Երկարաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	50,308,930	47,280,825	58,016,768
Այլ ոչ ընթացիկ պարտավորություններ	22,400,744	23,221,859	18,920,477
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ	**72,709,674**	**70,502,684**	**76,937,245**
Կարճաժամկետ բանկային վարկեր և փոխառություններ	10,331,600	8,000,157	3,444,918
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	10,809,870	9,530,503	11,960,008
Ստացված ընթացիկ կանխավճարներ	914,629	1,237,481	2,253,286
Այլ կրեդիտորական պարտքեր	1,590,046	2,082,875	2,634,565
Այլ ընթացիկ պարտավորություններ	3,012,478	1,755,730	1,248,947
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ	**26,658,623**	**28,806,096**	**21,541,723**
Ընդամենը պարտավորություններ	**99,368,297**	**93,109,431**	**98,478,968**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ	**115,948,252**	**113,671,740**	**106,693,337**

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄՓՈՓ ՏՎՅԱԼՆԵՐ

հազ. դրամ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի սկզբին	4,903,741	4,438,934	1,285,954
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	10,909,874	10,716,684	9,439,062
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(13,051,899)	(19,062,509)	(16,376,201)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	7,408,529	8,810,632	10,090,119
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	10,170,245	4,903,741	4,438,934

ԱՄՓՈՓ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ

Ցուցանիշի անվանումը	2018թ. (Աուդիտ անցած)	2017թ. (Աուդիտ անցած)	2016թ. (Աուդիտ անցած)
Զուտ շահույթը մեկ բաժնետոմսի հաշվով (EPS)	կիրառելի չէ	կիրառելի չէ	կիրառելի չէ
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-28.24%	-27.54%	-83.91%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-4.57%	-3.60%	-4.86%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-12.88%	-10.67%	-13.10%
Կապիտալի համարժեքության գործակից	0.14	0.18	0.08
Ֆինանսական կախվածության գործակից	5.99	4.53	11.99
Բացարձակ իրացվելիության գործակից	0.38	0.22	0.21
Ընթացիկ իրացվելիության գործակից	0.86	0.83	0.59
Ընդհանուր իրացվելիության գործակից	0.95	0.92	0.77
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	3.37	3.78	5.84
Դեբիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	108.17	96.68	62.50
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	2.76	2.25	2.46
Կրեդիտորական պարտքերի շրջապտույտի տևողությունն օրերով	132.36	162.39	148.52

Ֆինանսական գործակիցների հաշվարկման բանաձևերը ներկայացված են Հավելված 3-ով:

ՄԱՍ 3 ԹՈՂԱՐԿՈՂԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

3.1 Անկախ աուդիտորներ

Թողարկողի 2016, 2017 և 2018թթ. ֆինանսական գործունեության աուդիտն իրականացրել է **«ՔԵՅ-ՓԻ-ԷՄ-ՋԻ ԱՐՄԵՆԻԱ» ՍՊԸ**-ն՝

Հայաստան, ք. Երևան 0010,
Վազգեն Սարգսյանի փ., 26/1 շենք, 8-րդ հարկ
Հեռ.՝ + 374 (10) 56 67 62
Ֆաքս՝ + 374 (10) 56 67 62
Կայք՝ http://www.kpmg.am

3.2 Ռիսկային գործոններ

Տեխնոլոգիական փոփոխություններ: Թողարկողը ենթակա է տեխնոլոգիական փոփոխություններին առնչվող ռիսկերի, որոնք առաջ են գալիս հեռահաղորդակցման ցանցերի զարգացման, ընդլայնման և պահպանման գործընթացներում: Առկա են ռիսկեր OTT (Over-the-Top) տեխնոլոգիաներով մատուցվող ծառայությունների հետագա աճի հետ, ինչը բերում է ձայնային ծառայությունների շուկայի կրճատմանը: Ձայնային ծառայությունների շուկայի տարեկան կրճատումը 2016-2017թթ կազմել է 19%, իսկ 2017-2018թթ՝ 14.4%: Վերջինիս ազդեցությունը մեղմվում է տվյալների հաղորդման ծառայություններից պահանջարկի աճով: 2016-2017թթ-ի ընթացքում տվյալների հաղորդման ծառայությունների շուկայի աճը կազմել է 18%, իսկ 2017-2018թթ՝ 19%:

Արտարժութային ռիսկ: Թողարկողն ունի արտարժույթով, մասնավորապես ԱՄՆ դոլարով և եվրոյով ներգրավված վարկեր և փոխառություններ, որոնց հաշվեկշռային արժեքը, պայմանավորված արտարժութային շուկայում փոխարժեքի տատանմանբ, կարող է ենթարկվել փոփոխությունների, ինչն էլ կարող է բացասաբար ազդել Թողարկողի վարկունակության վրա: ՀՀ դրամի փոխարժեքի 10% արժեզրկումը ԱՄՆ դոլարի և եվրոյի նկատմամբ կունենա ստորև նշված ազդեցությունը Ընկերության ֆինանսական արդյունքների վրա, պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

	ԱՄՆ դոլար	Եվրո
հազար ՀՀ դրամ	Շահույթ / (վնաս)	Շահույթ / (վնաս)
31 դեկտեմբերի 2018թ. (10% փոփոխություն)	(5,002,402)	22,796
31 դեկտեմբերի 2017թ. (10% փոփոխություն)	(5,416,681)	500,934

3.3 Տեղեկատվություն թողարկողի մասին

3.3.1 Թողարկողի պատմությունը և զարգացումը

3.3.1.3 Նշանակալի դեպքերը

2015թ.-ին Ընկերությունը ձեռք բերեց «Օրանժ Արմենիա» շարժական կապի օպերատորի 100% բաժնետոմսերը:

2016թ.-ին Ընկերությունը տեղադրեց և շահագործման հանձնեց 4G+ տեխնոլոգիայով ցանցը իր շարժական կապի բաժանորդների համար: Նույն տարում Ընկերությունը ներկայացրեց շարժական հեռուսատեսության իր առաջարկը:

2016թ.-ին Ընկերությունը մեկնարկեց 1-ին կոնվերգենտ առաջարկը շուկայում, որը ծածկում է բաժանորդի բոլոր հեռահաղորդակցման պահանջները:

2017թ.-ին Ընկերությունն ընդլայնեց ֆիքսված կապի ծառայությունների մարզային ծածկույթը՝ հասանելի դառնալով ավելի քան 10 քաղաքներում:

2017թ.-ի փետրվարի 24-ին «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ-ն և «ԱՅՔԱՆ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆՍ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեցին՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ին միանալու միջոցով:

2017թ.-ի նոյեմբերի 8-ին «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ լրացուցիչ ներդրում կատարեց Ընկերության կապիտալում, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվեց՝ կազմելով 19,886,231 ՀՀ դրամ:

2017թ.-ի դեկտեմբերի 4-ին Ընկերությունը ներգրավեց նոր մասնակից՝ բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (բաժնետիրական ընկերություն)՝ սեփական կապիտալում ներդրում կատարելու միջոցով, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվեց՝ կազմելով 22,396,927 ՀՀ դրամ:

2017թ.-ին Ընկերությունն ընդլայնել է շարժական ծառայությունների մարզային ծածկույթը, ապահովելով 99.2% ծածկույթ: 2018թ.-ի երկրորդ եռամսյակի տվյալների համաձայն ընկերությունը ապահովում է 4G ծածկույթ 98% բնակավայրերում և 3G ծածկույթ 99.5% բնակչության համար:

2017թ.-ին իռլանդական OOKLA ընկերությունը Ընկերությանը շնորհեց «Հայաստանում ամենաարագ շարժական ցանց 2017» մրցանակը:

2019-ի հունիս ամսի 28-ին Ընկերությունը ներգրավեց նոր մասնակից՝ Սուրիկ Սիրակի Պողոսյանին՝ սեփական կապիտալում ներդրում կատարելու միջոցով, որի արդյունքում Ընկերության կանոնադրական կապիտալն ավելացվեց՝ կազմելով 23,903,477 ՀՀ դրամ:

3.3.2 Ներդրումները

2010թ.-ին ՀՀ-ում ինտերնետ ծառայությունների զարգացման նպատակով Ընկերությունը սկսել է օգտագործել օպտիկա-մանրաթելային ցանց, որն արտացոլում էր վերջին տեխնոլոգիական նորամուծությունները, ինչը և թույլ տվեց նվաճել FTTH (Fiber To The Home – Օպտիկա դեպի տուն) շուկան ՀՀ-ում: FTTH տեխնոլոգիան ներդրվել է՝ համագործակցելով միջազգային «Էրիքսոն» ընկերության հետ:

2015թ.-ին Ընկերությունը ձեռք բերեց «Օրանժ Արմենիա» շարժական կապի օպերատորի 100% բաժնետոմսերը:

2016թ.-ին գործարկվեց 4G+ ցանցը, որը միակն է Հայաստանում, որ ապահովում է տվյալների փոխանցման հոսքի կազմակերպումը միաժամանակ 3 հաճախականային շերտերում, երաշխավորելով ինտերնետի առավելագույն արագություն, և ընդլանվեց 3G ծածկույթը: 2016-2017թթ ընթացքում ընդհանուր շարժական կապի ընդլայնման, վերազինման և 4G+ ցանցի գործարկման համար Ընկերությունն իրականացրել է շուրջ 25.7 մլրդ դրամի ներդրում:

2017թ.-ի փետրվարի 24-ին «ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԹԻՎԻ» ՍՊԸ-ն և «ԱՅՔԱՆ ՔՈՄՅՈՒՆԻՔԵՅՇՆՍ» ՓԲԸ-ն վերակազմակերպվեցին՝ «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ին միանալու եղանակով:

2017 թվականին կատարվել են խոշոր կապիտալ ներդրումներ ցանցի ամբողջական վերազինման նպատակով՝ օգտագործելով ավելի առաջադեմ և նոր սարքավորումներ, ինչպես նաև ծածկույթի լավացման և շարժական ցանցի արագության ավելացման նպատակով ավելացվել են նոր բազային կայաններ:

2017թ.-ին կատարվել են նաև խոշոր կապիտալ ներդրումներ նոր սերվերների, կոմուտատորների ձեռք բերման և հզորացման ուղղությամբ:

2017 թվականին Ընկերությունը զգալիորեն ընդլայնել է ժամանակակից LTE ցանց ստեղծելու նախագիծը, որը նախատեսված է ավելի քան 500 հազար բաժանորդների համար:

2017թ.-ին հեռահաղորդակցման շուկայում իրականացված ընդհանուր ներդրումների 49%-ը կատարվել է Ընկերության կողմից, իսկ 2016 թ.-ին՝ 66%-ը:

2019թ.-ի հունվար–հունիս ամիսներին Ընկերությունը շարունակել է իրականացնել շարժական և ֆիքսված ցանցի բարելավմանն ու վերազինմանն ուղղված ներդրումներ, բարձրացնելով ցանցի հուսալիությունը, կապուղիների թողունակությունը, ինչպես նաև կրճատելով ցանցի խափանումների հավանականությունը:

3.4 Բիզնեսի նկարագիրը

3.4.1 Հիմնական գործունեությունը

Ընկերությունը հանդիսանում է կապի միասնական օպերատոր, այսինքն տրամադրում է կապի և հեռահաղորդակցման միջոցների ամբողջական փաթեթ: Լինելով առաջատար ֆիքսված ինտերնետի շուկայում՝ տրամադրում է նաև ֆիքսված հեռուստատեսության և հեռախոսակապի ծառայություններ:

Ֆիքսված ծառայությունների շուկայում 2019թ. մարտի 31-ի դրությամբ ձայնային ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը կազմել է 56,307, իսկ ինտերնետ հասանելիության ծառայություններից օգտվող բաժանորդների քանակը՝ 107.756: Նույն ցուցանիշները 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 55,871 և 104,356, իսկ 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ համապատասխանաբար 51,694 և 96,312:

Ընկերությունը գործունեություն է ծավալում նաև շարժական կապի ոլորտում՝ առաջարկելով ձայնային և ինտերնետ ծառայություններ:

Շարժական կապի ցուցանիշների գծով ակտիվ բաժանորդային համարների քանակը 2019թ. մարտի 31-ի դրությամբ կանխավճարային բաժանորդագրությամբ բաժանորդների գծով կազմել է 314,161 (2018թ.՝ 314,408, իսկ 2017թ.՝ 307,142), հետվճարային բաժանորդագրությամբ բաժանորդների գծով՝ 135,905 (2018թ.՝ 134,373, իսկ 2017թ.՝ 127,727), լայնաշերտ ինտերնետ հասանելիության բաժանորդների գծով՝ 151,551 (2018թ.՝ 141,748, իսկ 2017թ.՝ 131,054):

Ընկերության հասույթը հիմնականում ձևավորվում է երկու ուղղություններով՝ ապրանքների վաճառքից և ծառայությունների մատուցումից:

Ապրանքների վաճառքից հասույթում ներառված են բջջային հեռախոսների, աքսեսուարների, պլանշետների, Wi-Fi սարքերի, հեռակառավարման վահանակների վաճառքից ստացված հասույթները:

Ընկերությունը բջջային սարքավորումները վաճառում է ինչպես մանրածախ, այնպես էլ ապառիկ՝ ամսական վճարումներով:

Ծառայությունների մատուցումից հասույթն իր մեջ ներառում է հիմնականում հետևյալ ծառայության խմբերից ստացված հասույթները՝

- **Ֆիքսված կապի ծառայություններ**

  Ֆիքսված կապի ծառայություններն իրենց հերթին բաժանվում են ֆիքսված լայնաշերտ և անլար ինտերնետի, թվային հեռուստատեսության, վերգետնյա թվային

հեռախոսակապի: Նշված ծառայություններից օգտվում են ինպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական անձինք:

- **Շարժական կապի ծառայություններ**

  Շարժական կապի ծառայությունների խմբերն են՝ կանխավճարային և հետվճարային բաժանորդագրությամբ բաժանորդներին մատուցվող (բացառությամբ շարժական ինտերնետի) ծառայություններ, շարժական ինտերնետը և ռոումինգ ծառայությունները:

- **IP ու տվյալների փոխանցման ծառայություններ**

- **Միջազգային փոխկապակցման ծառայություններ**

Ընկերության հասույթի կառուցվածքը 2018թ.-ի դրությամբ ունի հետևյալ տեսքը՝ շարժական կապի ծառայություններից հասույթի տեսակարար կշիռն ընդհանուր հասույթի մեջ կազմում է 38% (2017թ.՝ 41%, 2016թ.՝ 48%), ֆիքսված կապի ծառայություններից հասույթը՝ 36% (2017թ.՝ 35%, 2016թ.՝ 35%), IP ու տվյալների փոխանցման ծառայություններից հասույթը՝ 17% (2017թ.՝ 16%, 2016թ.՝ 12%), ապրանքների վաճառքից հասույթը՝ 9% (2017թ.՝ 8%, 2016թ.՝ 5%): 2019թ.-ի առաջին եռամսյակի տվյալներով պատկերը հետևյալն է՝ շարժական կապի ծառայություններից հասույթի տեսակարար կշիռն ընդհանուր հասույթի մեջ կազմում է 37% ֆիքսված կապի ծառայություններից հասույթը՝ 35%, IP ու տվյալների փոխանցման ծառայություններից հասույթը՝ 17%, ապրանքների վաճառքից հասույթը՝ 11%:

3.4.2 Հիմնական շուկաները

3.4.2.1 *Հիմնական շուկաները*

Հիմնական շուկաները, որոնցում Ընկերությունը իր գործունեությունն է ծավալում, ներկայացված են ստորև՝

- **շարժական ձայնային**. հագեցած շուկա է, բնակչության բավականին բարձր տոկոս է օգտվում ծառայության այս տեսակից (Օրանժ Արմենիա ՓԲԸ-ն, որի 100% բաժնետոմսերը 2015-ին ձեռք են բերվել Ընկերության կողմից, իր շարժական ծառայություններով մուտք է գործել շուկա 2009թ-ից),

- **շարժական լայնաշերտ ինտերնետ.** անկում ապրող շուկա է, իր դիրքերը զիջում է շարժական(հեռախոսի միջոցով օգտվող) և ֆիքսված ինտերնետին (Օրանժ Արմենիա ՓԲԸ-ն, որի 100% բաժնետոմսերը 2015-ին ձեռք են բերվել Ընկերության կողմից, իր շարժական ծառայություններով մուտք է գործել շուկա 2009թ-ից),

- **շարժական հեռուստատեսություն.** նոր ծառայություն է հայկական հեռահաղորդակցման շուկայում, ակտիվ զարգանում է (մուտք է գործել շուկա 2016թ.),

- **ֆիքսված լայնաշերտ ինտերնետ**. աճող շուկա է (մուտք է գործել շուկա 2009թ.),

- **Ֆիքսված հեռուսատատեսություն**. աճող շուկա է (մուտք է գործել շուկա 2009թ.),
- **Ֆիքսված ձայնային.** հագեցած շուկա է (մուտք է գործել շուկա 2009թ.)

3.4.2.2 *Մրցակցային դիրքը*

Ինտերնետ կապի շուկայում Ընկերությունը մրցակցում է Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ), Ռոստելեկոմ («ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ) և Վիվասել-ՄՏՍ («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) ընկերությունների հետ: 2018թ.-ի 4-րդ եռամսյակի եկամտի ցուցանիշով ընդհանուր լայնաշերտ ինտերնետ շուկայում (շարժական (բացառությամբ բջջային հեռախոսի միջոցով օգտվողների) և ֆիքսված լայնաշերտ ինտերնետի շուկաները միասին) Ընկերությունը զբաղեցրել է առաջատար դիրք (շուկայի 52.1%): Ընկերությունը պահպանել է իր առաջատար դիրքը նաև 2019թ.-ի առաջին եռամսյակում մեծացնելով՝ շուկայում իր մասնաբաժինը (շուկայի 53.6%):

Ֆիքսված ձայնային կապի շուկայում Ընկերությունը մրցակցում է Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) և Ռոստելեկոմ («ՋԻԷՆՍԻ-ԱԼՖԱ» ՓԲԸ) ընկերությունների հետ, որոնք 2018թ.-ի 4-րդ եռամսյակի արդյունքներով ըստ եկամուտների զբաղեցնում են համապատասխանաբար 1-ին (89.5%) և 3-րդ (2.5%) տեղերը: 2018թ.-ի 4-րդ եռամսյակի արդյունքներով Ընկերությունն այս շուկայում ըստ եկամուտների զբաղեցնում է 2-րդ տեղը ունենալով շուկայի 8 տոկոս մասնաբաժինը: 2019թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում Ընկերության շուկայի մասնաբաժնի նույն ցուցանիշը մնացել է անփոփոխ:

Ընդհանուր շարժական կապի և հարակից ծառայությունների շուկայում Ընկերությունը մրցակցում է Վիվասել-ՄՏՍ («ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ) և Բիլայն («ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ) ընկերությունների հետ: Ընկերությունը շուկայում ըստ եկամուտների զբաղեցնում է 3-րդ տեղը 2019թ.-ի 1-ին եռամսյակում ունենալով շուկայի 21% մասնաբաժինը (2018թ.-ի 4-րդ եռամսյակում նույն ցուցանիշը կազմել է 19%):

Ըստ 2019թ.-ի 1-ին եռամսյակի արդյունքների՝ շարժական կապի շուկայի ձայնային հատվածում Ընկերությունը ըստ եկամտի մասնաբաժնի բարձրացել է և զբաղեցնում է 2-րդ դիրքը (23.4%), իսկ ինտերնետի (բացառությամբ հեռախոսի միջոցով օգտագործվող ինտերնետի) հատվածում՝ 1-ինը (64.4%):

3.5 Թողարկողի հիմնական միջոցները

Հիմնական միջոցներն առ 31/12/18թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Ցանցային ենթակառուցվածքներ	30,509,578
Սարքավորումներ	14,908,799
Վարձակալված ՀՄ-ներ	209,356

Հիմնական միջոցներն առ 31/12/18թ.	Զուտ հաշվեկշռային արժեքը (հազար ՀՀ դրամ)
Շենքեր և հողամասեր	862,314
Տրանսպորտային միջոցներ	209,356
Արտադրական գույք, տնտեսական գույք	213,228
Կառուցման ընթացքում գտնվող հիմանական միջոցներ	820,542
Ընդամենը	**47,888,184**

2018թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության՝ 11,874,247 հազ. դրամ արժողությամբ հիմնական միջոցները գրավադրված են Ընկերության վարկային պարտավորությունների համար:

3.6 Զարգացման վերջին միտումները

Ընկերությունը շարունակաբար աճում է ինտերնետի մատակարարման մանրածախ և մեծածախ շուկաներում՝ մեծացնելով մասնաբաժինը մանրածախ շուկայում և գրավելով նոր գործընկերներ մեծածախ շուկայում:

Ձայնային շուկայի ծառայությունների ոլորտում Ընկերությունը հանդես է գալիս նորարարական լուծումներով՝ բաժանորդներին առաջարկելով հարմար և ամբողջական ծառայություններ: Ընկերությունը, շարունակաբար ընդլայնելով կապի ծածկույթը, ծառայությունները դարձնում է որակյալ և հասանելի ամենուր:

2018թ.-ի Ընկերության հասույթը կազմել է 40.7 մլրդ դրամ՝ 2017թ.-ի համեմատ աճելով 3.5 մլրդ դրամով կամ 9.6%-ով: 2018թ.-ին գործառնական ծախսերը կազմել են 39.6 մլրդ դրամ՝ 2017թ.-ի համեմատ ավելանալով 2.5 մլրդ դրամով կամ 6.7%-ով:

3.7 Թողարկողի կառավարման մարմինները և կառավարման մարմինների անդամները

3.7.3 Թողարկողի կառավարման մարմինների անդամները

Թողարկողի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր անձի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են ստորև բերված աղյուսակում

Անունը, ազգանունը / Կազմակերպության անվանումը	Բնակության վայրը/Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Հայկ Հովիկի Եսայան	ՀՀ, ք. Երևան	Ընդհանուր ժողովի մասնակից / Գլխավոր տնօրեն	«ՅՈՒՔՈՄ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ

Անունը, ազգանունը / Կազմակերպության անվանումը	Բնակության վայրը/Գրանցման հասցեն	Զբաղեցրած պաշտոնը	Թողարկողի կազմից դուրս գործունեությունը
Ալեքսանդր Հովիկի Եսայան	ՀՀ, ք. Երևան	Ընդհանուր ժողովի մասնակից	«ԱՅՅՈՒՆԵԹՎՈՐՔՍ» ՍՊԸ մասնակից, Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության նախագահ, «ՅՈՒՔՈՄ» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամ
Արամ Սուրենի Խաչատրյան	ՀՀ, ք. Եղվարդ	Ընդհանուր ժողովի մասնակից	«Մեգաֆուդ» ՍՊԸ հիմնադիր/տնօրեն, «Ամասիայի Բարեկամներ» ՀԿ հիմնադիր, «Վոթչ Վորլդ» ՍՊԸ հիմնադիր
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	ՀՀ, ք. Երևան	Ընդհանուր ժողովի մասնակից	«Ջեյ Դաբլյու Հոլդինգ» ՍՊԸ հիմնադիր, «Պերսոնալ Սեքյուրիթի» ՍՊԸ հիմնադիր, «Ապեյրոն» ՍՊԸ հիմնադիր, «Ֆոտոմաստեր» ՍՊԸ հիմնադիր, «Գալաքսի Կոնցեռն» ՍՊԸ հիմնադիր
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	ՀՀ, ք. Երևան	Ընդհանուր ժողովի մասնակից	«Ջեյ Դաբլյու Հոլդինգ» ՍՊԸ հիմնադիր, «Պերսոնալ Սեքյուրիթի» ՍՊԸ հիմնադիր, «Ապեյրոն» ՍՊԸ հիմնադիր, «Ֆոտոմաստեր» ՍՊԸ հիմնադիր, «Գալաքսի Կոնցեռն» ՍՊԸ հիմնադիր
Սուրիկ Պողոսյան Սիրակի	ՀՀ, ք. Տաշիր	Ընդհանուր ժողովի մասնակից	
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ»	ՌԴ, ք. Մոսկվա	Ընդհանուր ժողովի մասնակից	
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	ՀՀ, ք. Երևան	Ընդհանուր ժողովի մասնակից	

Ընդհանուր ժողովի մասնակիցները ունեն կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր Ժողովի իրավասությանը վերապահված հարցերով քվեարկելու իրավունք:

Գլխավոր տնօրենն ունի կանոնադրությամբ սահմանված Ընդհանուր Ժողովի բացառիկ իրավասությանը վերապահված հարցերից բացի բոլոր հարցերի վերաբերյալ որոշումների կայացման իրավունք:

Ընկերության կառավարման մարմինների իրավասությունները մանրամասն ներկայացված են Ծրագրային Ազդագրի 3.7.2 կետով:

3.9 Հսկող անձինք

Թողարկողի հսկող անձինք են՝

Կանոնադրական կապիտալում մասնակցության ուժով՝	Կնքված վարկային պայմանագրերին համաձայն՝
- «ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ - Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (վերջնական վերահսկող անձն է Սամվել Սարգիսի Կարապետյանը) - Հայկ Հովիկի Եսայան - Ալեքսանդր Հովիկի Եսայան - Արամ Սուրենի Խաչատրյան - Գուրգեն Գագիկի Խաչատրյան - Արտյոմ Գագիկի Խաչատրյան - Սուրիկ Պողոսյան Սիրակի	- Էյչ Էս Բի Սի Բանկ Հրապարակային Սահմանափակ պատասխանատվությամբ Ընկերություն (PLC) - Ամերիաբանկ ՓԲԸ - Արարատբանկ ԲԲԸ - Ինեկոբանկ ՓԲԸ - Արդշինբանկ ՓԲԸ - Կոնվերս Բանկ ՓԲԸ - Հայբիզնեսբանկ ՓԲԸ

Ընկերությունը վարկային պայմանագրերի շրջանակներում վարկատու կազմակերպությունների հանդեպ ստանձնել է որոշակի պարտավորվածություն տեղյակ պահել կամ ստանալ նրանց հավանությունը հետագայում նոր վարկային պարտավորություններ ներգրավվելու դեպքում, որը կարող է էապես ազդել թողարկողի որոշումների կայացման վրա:

3.11 Լրացուցիչ տեղեկատվություն

3.11.1 Կանոնադրական կապիտալը

3.11.1.2 *Թողարկված բաժնեփոխանակների (բաժնեմասերի) քանակը*

Թողարկողի կանոնադրական կապիտալը բաժանված է 8 մասնակիցների միջև ստորև ներկայացված մասնաբաժիններով.

Մասնակիցը	Բաժնեմասը (ՀՀ դրամ)	Բաժնեմասի չափը (%)
«ԱյՅու Թելեքոմյունիքեյթ» ՍՊԸ	6,954,246	29.093
Արամ Սուրենի Խաչատրյան	5,818,721	24.343
Գուրգեն Գագիկի Խաչատրյան	2,846,649	11.909
Արտյոմ Գագիկի Խաչատրյան	2,846,649	11.909
Բաժնետիրական առևտրային բանկ «ՖՈՐԱ-ԲԱՆԿ» (բաժնետիրական ընկերություն)	2,510,696	10.504
Հայկ Հովիկի Եսայան	709,983	2.970
Ալեքսանդր Հովիկի Եսայան	709,983	2.970
Սուրիկ Պողոսյան Սիրակի	1,506,520	6.302